

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

RSV-ի (շնչառական սինցիտիալ վիրուսի) դեմ պատվաստանյութ. Ինչ է Զեզ անհրաժեշտ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

RSV պատվաստանյութը կարող է կանխել ստորին շնչուղիների հիվանդությունը, որն առաջանում է **շնչառական սինցիտիալ վիրուսից (RSV)**: RSV-ն տարածված շնչառական վիրուս է, որը սովորաբար առաջացնում է թեթև, հարբուխանման ախտանշաններ:

RSV-ն կարող է ինքնազգացողության վատացում առաջացնել բոլոր տարիքի մարդկանց մոտ, սակայն հատկապես վտանգավոր կարող է լինել մանկահասակ երեխաների և տարեցների համար:

- RSV-ն մանկահասակ երեխաների հոսպիտալացման ամենատարածված պատճառն է ԱՄՆ-ում: Մինչև 12 ամսական նորածինները (հատկապես 6 ամսականից փոքր) և վաղահաս ծնված կամ քրոնիկ թոքային կամ սրտային հիվանդություն կամ թուլացած իմունային համակարգ ունեցողները RSV-ի հիվանդությամբ ծանր հիվանդանալու մեծ ռիսկի տակ են:
- RSV վարակը կարող է վտանգավոր լինել որոշ չափահասների համար ևս: Ծանր RSV հիվանդության բարձր ռիսկի տակ գտնվող չափահասների թվում են տարեցները, հատկապես քրոնիկ սրտային կամ թոքային հիվանդություններ, թուլացած իմունային համակարգ, որոշակի այլ քրոնիկ բժշկական խնդիրներ ունեցողները կամ ծերանոցներում ապրողները:

RSV-ն փոխանցվում է վիրուսի հետ անմիջական շփման միջոցով, օրինակ՝ վարակված անձի հազի կամ փոշոտոցի կաթիլները շփվում են ձեր աչքերի, քթի կամ բերանի հետ: Այն կարող է նաև տարածվել, երբ մեկը դիպչում է վիրուս պարունակող մակերեսի, օրինակ՝ դռան բռնակի, և այնուհետև դիպչում իր դեմքին:

RSV վարակի ախտանիշներից են հարբուխը, ախորժակի անկումը, հազը, փոշոտոցը, ջերմությունը կամ շնչարգելությունը: Նորածինների մոտ RSV-ի ախտանիշները կարող են նաև ներառել դյուրագրգռություն (չափից շատ անհանգստություն), ակտիվության պակաս կամ ապնոե (շնչառության կանգ 10 վայրկյանից ավելի):

Մարդկանց մեծ մասը առողջանում է մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում, սակայն RSV-ն կարող է ավելի լուրջ լինել՝ հանգեցնելով շնչարգելության և թթվածնի ցածր մակարդակի: RSV-ն կարող է բրոնխիտի առաջացնել (թոքերի փոքր շնչուղիների բորբոքում) և թոքաբորբ (թոքերի վարակ): RSV-ն կարող է նաև հանգեցնել այլ հիվանդությունների վատթարացման/ սրացման, ինչպիսիք են՝ ասթման, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը (թոքերի քրոնիկ

հիվանդություն, որը դժվարացնում է շնչառությունը) կամ սրտային անբավարարությունը (երբ սիրտը չի կարողանում բավարար արյուն և թթվածին մղել/ ապահովել ամբողջ մարմնին):

Նորածինները և տարեցները, ովքեր ծանր հիվանդացել են RSV-ով, կարող են հոսպիտալացման կարիք ունենալ: Ոմանք նույնիսկ կարող են մահանալ:

2. RSV պատվաստանյութ

Նորածիններին/մանկահասակ երեխաներին RSV-ից պաշտպանելու համար առկա է պատվաստման երկու տարբերակ՝ մայրական պատվաստանյութ հղիների համար և փոքրիկին տրվող կանխարգելիչ հակամարմինները: Մանուկների մեծ մասի պաշտպանության համար անհրաժեշտ է այս տարբերակներից միայն մեկը:

Հիվանդությունների վերահսկման կենտրոնը (CDC) խորհուրդ է տալիս RSV պատվաստանյութի միանվագ դեղաչափ հղի անձանց՝ **հղիության 32-րդ շաբաթից մինչև 36-րդ շաբաթն ընկած ժամանակահատվածում**՝ մինչև 6 ամսական նորածինների շրջանում RSV-ի հիվանդությունը կանխարգելելու նպատակով: Միացյալ Նահանգների զգալի մասում այս պատվաստումը խորհուրդ է տրվում կատարել սեպտեմբերից հունվարն ընկած ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, որոշ վայրերում (օրինակ՝ Հավայան կղզիներում, Ալյասկայում և Ֆլորիդայի որոշ մասերում) պատվաստման ժամանակացույցը կարող է տարբերվել՝ ելնելով տարվա այն սեզոնից, երբ RSV-ը առավել շատ է շրջանառվում՝ տարածքում:

Հիվանդությունների վերահսկման կենտրոնը (CDC) խորհուրդ է տալիս RSV պատվաստանյութի **միանվագ դեղաչափ 75 և ավելի տարեկան բոլոր անձանց**, ինչպես նաև **60-74 տարեկան չափահասներին, ովքեր գտնվում են ծանր RSV հիվանդության բարձր ռիսկի տակ**: Բարձր ռիսկի տակ գտնվող 60-74 տարեկան չափահասներն այն անձինք են, ովքեր ունեն սրտի կամ թոքերի քրոնիկ հիվանդություն, թուլացած իմունային համակարգ կամ այլ քրոնիկ հիվանդություններ, և նրանք, ովքեր բնակվում են ծերանոցներում:

RSV-ի դեմ պատվաստանյութը կարող է ներարկվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:



U.S. CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

3. Խոսեք Ձեր առողջապահության մատակարարի հետ

Տեղեկացրեք ձեր պատվաստում իրականացնողին, եթե պատվաստվող անձը՝

- Ունեցել է պլերզիկ ռեակցիա RSV պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո, կամ ունի որևէ ծանր, կյանքին վտանգ սպառնացող պլերզիա

Որոշ դեպքերում Ձեր առողջապահության մատակարարը կարող է որոշել հետաձգել RSV պատվաստումը մինչ հաջորդ այցելությունը:

Թեթև հիվանդություններ ունեցող մարդիկ, օրինակ՝ հարբուխ, կարող են պատվաստվել: Միջին կամ ծանր հիվանդ մարդիկ պետք է RSV պատվաստանյութ ստանան առողջանալուց հետո միայն:

Ձեր առողջապահության մատակարարը կարող է հավելյալ տեղեկություններ տրամադրել:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- RSV պատվաստումից հետո կարող է առաջանալ ցավ, կարմրություն և այտուցվածություն ներարկման հատվածում, հոգնածություն, ջերմություն, գլխացավ, սրտխառնոց, փորլուծություն և մկանային կամ հոդային ցավ:

RSV պատվաստումից հետո որոշ տարեցների մոտ արձանագրվել են լուրջ նյարդաբանական հիվանդություններ, ներառյալ Գիլեն-Բարրեի համախտանիշը (ԳԲԸ): Ներկա պահին 60 և ավելի տարեկան անձանց մոտ RSV պատվաստանյութի պատճառով ԳԲԸ-ի աճող ռիսկը ոչ հաստատվել է, ոչ բացառվել:

RSV պատվաստանյութ ստացած հղիների մոտ արձանագրվել են վաղաժամ ծնունդ և հղիության ընթացքում բարձր արյան ճնշում, այդ թվում նախաէկլամպսիա: Դեռևս պարզ չէ՝ արդյոք այս երևույթների առաջացման պատճառը պատվաստանյութն է:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բժշկական միջամտություններից հետո, ներառյալ պատվաստումը: Տեղեկացրեք Ձեր առողջապահության մատակարարին, եթե գլխապտույտ, տեսողության փոփոխություններ կամ ականջներում զնգոց ունեք:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի պատվաստանյութի դեպքում ևս ծանր պլերզիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան առաջացման փոքր հավանականություն կա:

Armenian translation provided by Immunize.org

V-safe-ը անվտանգության մշտադիտարկման համակարգ է, որը Ձեզ թույլ է տալիս Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC) հետ կիսվել, թե ինչպես եք Դուք կամ Ձեր խնամյալը զգում RSV պատվաստանյութ ստանալուց հետո: Կարող եք տեղեկություններ գտնել և գրանցվել V-Safe-ում՝ vsafe.cdc.gov կայքում:

5. Ի՞նչ անել լուրջ խնդրի դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ այն բանից հետո, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ պլերզիկ ռեակցիայի նշաններ եք նկատում (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք 911 և տեղափոխեք անձին մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք Ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների/հակառակ ազդեցությունների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների վերաբերյալ հաշվետվությունների համակարգին (VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը ներկայացնում է Ձեր բժիշկը կամ կարող եք ինքներդ դա անել: Այցելեք VAERS -ի կայք՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարեք 1-800-822-7967: *VAERS-ը միայն ռեակցիաների/ազդեցությունների մասին հաղորդելու համար է, VAERS-ի աշխատակազմը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:*

6. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Դիմեք Ձեր առողջապահության մատակարարին:
- Զանգահարեք Ձեր՝ տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Այցելեք Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կայք պատվաստանյութի փաթեթավորման ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines
- Կապ հաստատեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) հետ՝
 - Զանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) հեռախոսահամարով կամ
 - Այցելեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի(CDC) կայք՝ www.cdc.gov/vaccines:

